ՀՏԴ 726.5 (479.25-25) ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ժ.Թորոսյան

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱԼԻՐԸ

Ներկայացված է Երևանի Մայր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համալիրի և նրա առանձին բաղկացուցիչների հատակագծային և ծավալատարածական հորինվածքի քննությունը: Բացահայտված են համակառույցի գործառութային և կառուցվածքային առանձնահատկությունները: Վավերացված են այն նորարարական մոտեցումները, որ ստացվել են ավանդական լուծումների ստեղծագործաբար օգտագործման ճանապարհով: Սրանք նպաստել են կառույցի մասշտաբայնության ու մոնումենտալության առավել լիարժեք ընկալմանը:

Առանցքային բառեր. *Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, եկեղեցի, վանական համալիր, հատակագծային և ծավալատարածական հորինվածքի քննություն, գործառութային առանձնահատկություններ*

Կառուցման շարժառիթն ու նախապատմությունը: Երևանի Մայր եկեղեցին կառուցված է երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նախաձեռնությամբ՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը, որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Հիմնադրման համար կարևոր է եղել նաև մայրաքաղաքի բնակչության աճի հանգամանքը՝ մինչև 1,5 *մլն* մարդ: Անհրաժեշտություն էր առաջացել կառուցել նոր, առավել տարողունակ և ճարտարապետությամբ մայրաքաղաքի նորաստեղծ ճարտարապետական նկարագրին համահունչ եկեղեցի:

1990թ.-ի մարտի 31-ին մեծ հանդիսավորությամբ Հայրապետն իր ձեռքով հուշաքար է դրել Մայր եկեղեցու կառուցման վայրում՝ այն բարձունքին, որը ք.Երևանի քաղաքապետարանի կողմից առանձնացվել էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու համար: Օրհնության խոսքում, վկայակոչելով Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հիմնադիր Սուրբ Գրիգոր Լուսավորչի խոսքը, Վազգեն Ա Հայրապետն ասել է, որ նա պատգամում էր կառուցել «Լուսո Սուրբ խորանը, որովհետև նրանից է ծագել լույսը Հայաստան աշխարհի վրա»:

Եկեղեցու նախագծի լավագույն տարբերակ ունենալու համար հայտարարվել էր բաց մրցույթ և մասնակցել ցանկացողներին բաժանվել նախագծման առաջադրանքը: Մրցույթին ներկայացված էին 33 նախագիծ, որից վերջնական փուլ անցան 7-ը: Նախագծի գնահատման չափանիշ էր համարվելու համապատասխանելիությունը եկեղեցու արարողություններին, իսկ ներքին և արտաքին ճարտարապետության առումով՝ համահնչությունն ազգային

ավանդույթներին ու նորարարությանը: Աշխատանքները ցուցադրվեցին ք.Էջմիածնում՝ Վեհարանի սրահում՝ ի տես Վեհափառ Հայրապետի, հոգևորական դասի, մայրավանքի աշխատակիցների: Վերջին քննարկմամբ միաձայն առաջին մրցանակի արժանացավ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի նախագիծը, երկրորդ մրցանակի՝ ճարտարապետ Արտակ Ղուլյանի նախագիծը:

Հեղինակներին հանձնարարվեց մրցութային հանձնաժողովի դիտողություններին համաձայն սահմանված ժամկետում վերամշակման ենթարկել նախագծերը և վերստին ներկայացնել քննարկման: Դա տեղի ունեցավ 1992թ. օգոստոսի 29-ին: Այս անգամ արդեն երաշխավորվեց Ստեփան Քյուրքչյանի նախագիծը և ներկայացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Վազգեն Ա-ին: Գծագրերից մեկի վրա Վեհափառը թողեց «կատարյալ է, Վազգեն Ա» մակագրությունը: Եկեղեցու հիմնօրհնեքը կատարել է երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն՝ 1997թ., Սուրբ Աստվածածնի ավետման տոնակատարության օրը՝ ապրիլի 7-ին:

Երևանի Մայր եկեղեցին կառուցվել է ճանաչված բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների և նրանց զավակներ Ռիչարդ և Լուիզ Սիմոն Մանուկյանների հովանավորությամբ: Սուրբ Տրդատ և Սուրբ Աշխեն մատուռները կառուցվել են Նազար և Արտեմիս Նազարյանների, Գևորգ և Լինդա Գևորգյանների, զանգակատունը՝ Էդուարդո Էռնեկյանի նվիրատվություններով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համալիրի տեղադրությունը: Համալիրը կառուցվել է Կենտրոն վարչական համայնքում՝ Օղակաձև զբոսայգու հարավարևմտյան մասում, բարձրադիր բլրի վրա և զբաղեցնում է 7 *հա* տարածք: Եկեղեցու համալիրը, դիրքային և ծավալային առումներով գերակայում է միջավայրում և դիտելի է Երևանի բազմաթիվ անկյուններից: Եկեղեցու տեղընտրումը հաջող է կատարված: Տարածքն ընդարձակ է և այն հնարավոր է դարձրել ինչպես մեծազանգված համալիրի կառուցապատումը, այնպես էլ նպաստել դրա կազմի մեջ մտնող Մայր եկեղեցու ու կից երկու մատուռների երկու կողմերի նկատմամբ հարմար դիրքի ապահովմանը: Համալիրն ամբողջովին ներառված է զբոսայգու տարածական միջավայրում և դարձել վերջինիս անբաժանելի մի մասնիկը: Այսպիսի լանդշաֆտային լուծումներ ունեն միջնադարյան պաշտամունքային համալիրները և Սուրբ Գրիգոր Լուսավորչի համակառույցում այդ ավանդույթը նորովի դրսևորում է ստացել: Ամբողջ համալիրը տեղադրված է բարեկարգ, բազալտապատ հարթակի վրա, ինչպես անտիկ տաճարները, որ կառուցվում էին ստիլոբատեսի վրա և դիտելի էին բոլոր կողմերից: Այն հատակից ցածր է 40 *սմ*-ով: Հարթակը պահվում է տարբեր բարձրությունների հենապատերի հաշվին, որոնք այգու մեջ ցցուն չերևալու համար ծածկված են հողով և կանաչապատված: Համալիրի տարածքը բարեկարգված է. տեղադրված են նստարաններ և ցայտաղբյուրներ, դեկորատիվ լուսավորությունն իրականացված է նարնջագույն լուսարձակների միջոցով:

Եկեղեցու համալիրը: Կազմի մեջ ընդգրկված են Սուրբ Գրիգոր Մայր եկեղեցին, Սուրբ Տրդատ թագավորի և Սուրբ Աշխեն թագուհու մատուռները, գավիթը, զանգակատունը, վանատունը, մոմավառության սրահը, ավտոմեքենաների վերգետնյա և ստորգետնյա կայանատեղերը: Մայր եկեղեցու ներքևի հարկում ընդունելությունների և եկեղեցուն առնչվող միջոցառումների համար նախատեսված են սրահներ (նկ.1):

Նկ.1. Ս Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համալիրի ընդհանուր տեսքը

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Գլխավոր եկեղեցին: Եկեղեցին համակառույցի գերակա շինությունն է: Այն հատակագծում ունի հավասարաթև խաչի հորինվածք և կենտրոնակազմ գմբեթավոր՝ աղամանդակերպ մշակված ծավալ: Կառույցն ամենախոշորն է հայկական եկեղեցիների շարքում: Զբաղեցրած տարածքի մակերեսը մոտավորապես 3,822*քմ* է, իսկ ամենաբարձր կետը՝ Մայր եկեղեցու խաչը, հատակից 54*մ* բարձր է: Արտաքին քառակուսու չափերն են՝ 58,0x58,0 *մ*: Ներսում միանգամից կարող է տեղավորվել մինչև 3000 մարդ, որից 1700-ը՝ նստատեղով: Եկեղեցին ունի երեք մուտք՝ արևմտյան (գլխավոր), հյուսիսային և հարավային: Վերջին երկու մուտքերը չափերով և նշանակությամբ զիջում են գլխավորին: Երեք մուտքերն էլ ունեն տաք անցումներ: Մուտքերը գտնվում են աղոթասրահի հարթության վրա, որը դրսի հարթակից բարձր է 40 *սմ*-ով: Եկեղեցին ունի նաև չորրորդ մուտք՝ արևելյան կողմի ստորգետնյա մասից: Սա միմիայն հոգևորականների և մնացած ծառայողական անձնակազմի համար է:

Գլխավոր, արևմտյան մուտքից դեպի բեմը տանող անցուղին ունի 3 *մ* լայնություն, նույնքան են նաև հյուսիսային և հարավային մուտքերի անցուղիները: Մնացյալ, ներքին անցուղիները համեմատաբար նեղ են՝ 1,5 *մ*: Բեմահարթակի ամբողջ երկարությունը 5 *մ* է, մարմարե երեսապատումով տեղադրված է դասի հարթակը: Դասից 1,1 *մ* բարձրության վրա, եկեղեցու արևելյան մասում ավագ խորանի բեմահարթակն է, որը զբաղեցնում է 180 *քմ* մակերես: Ավագ խորանի աջ և ձախ կողմերում տեղադրված են ավանդատները, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցնում է 100 *քմ*: Ավանդատներն աղոթասրահից անջատում են 4 *մ* բարձրության մարմարյա պատերը, որոնցից յուրաքանչյուրում՝ խորշերի մեջ, 12 առաքյալների որմնանկարներն են՝ ամեն կողմում 6 առաքյալ [1]:

Հորինվածքի կենտրոնը Սուրբ Սեղանն է, որը դեպի վերև զարգացող ճարտարապետական հետաքրքիր լուծումով է արտահայտված: Ամբողջությամբ սպիտակ մարմարով երեսապատված սեղանի կենտրոնում Մարիամ Աստվածածնի մեծադիր որմնանկարն է՝ մանուկ Քրիստոսի հետ: Սուրբ Սեղանի ետնամասում կա ազատ տարածք՝ ծիսակատարությունների բազմաթիվ պարագաների տեղադրման համար (նկ.2):

Ազատ է նաև աղոթասրահի ներքին տարածությունը: Նստատեղերի յուրաքանչյուր շարքում տեղադրվել է 12 աթոռ, իսկ շարքերը իրարից հեռացված են 1,05 *մ* և ունեն երկու կողմից ազատ անց ու դարձի հնարավորություն: Այս պայմանի պահպանելը եկեղեցիներում չափազանց կարևոր է, քանի որ ծիսակատարությունը կարող է տևել ամբողջ օրը և մարդկանց մուտքն ու ելքը պայմանավորված չէ որոշակի ժամի հետ: Եկեղեցու ներսը միանգամայն ազատված է ամեն տեսակի հենարաններից, սյուներից, պատերից, որոնք կարող էին փակել տեսադաշտը դեպի ավագ խորան: Ամբողջ 1700 նստատեղերը դասավորված են մեկ ամբողջական հարթության մեջ, առանց բարձրացրած վերին հարթակների և ունեն հիանալի տեսանելիություն (նկ.1): Կանգնելու տեղերը դասավորված են այնպես, որ կանգնած մարդիկ չխանգարեն նստածներին: Աղոթասրահին հատկացված է 1800 *քմ* տարածք, որն ամբողջությամբ մարմարապատ է:

Գմբեթի վերին կետից կախված է բյուրեղապակյա մեծ ջահը: Աղոթասրահի ներքին մակերեսները երեսապատվել են հայկական ոսկեգույն տուֆի 8 *սմ* հաստության սալերով: Պատերի հարթությունների վրա մեկ-երկու տեղ հարթաքանդակներ են, իսկ որոշ մասերում Սուրբ Գրքի պատվիրաններից փորագրված արձանագրություններ: Աղոթասրահի ցերեկային և արհեստական լուսավորությունն իրականացված է եկեղեցուն բնորոշ լուսավորությամբ, պահպանելով որոշ խորհրդավորություն:

Դասի հարթակի հյուսիսային պատի կողմում տեղադրված է մարմարյա մկրտության ավազան՝ կնունքների համար: Ամբողջ աղոթասրահի մակերեսի չափով եկեղեցու ստորգետնյա մասում կա 4 *մ* բարձրության տարածք, որը օգտագործվում է ծառայությունների համար (նկ. 3):



Նկ. 2. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատակագիծը

Նկ. 3. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնատեսքը

Այնտեղ՝ կենտրոնում, գմբեթի ուղղաձիգ առանցքի վրա է տեղադրված Գրիգոր Լուսավորչի հուշաքարը, ուր այցի են գալիս հավատացյալներն իրենց հարգանքը մատուցելու նրա հիշատակին: Խաչը հիշեցնող և հատակից մի փոքր ցած իջնող տարածքի վրա տեղադրված է 1,5x3,0 *մ* չափերի փայլեցված գրանիտի սալը՝ համապատասխան մակագրությամբ: Հուշատարածքն ամփոփում են չորս մեծ որմնասյուները, որոնք պահում են աղոթասրահի ծածկը: Նրանցից յուրաքանչյուրն ունի 3,0x3,0 *մ* չափեր, որոնց մեջ տեղադրված խորշերում դրվել են մոմակալներ հիշեցնող բրոնզյա լուսատուներ՝ էլեկտրական հատուկ լամպերով: Հուշաքարը պարուրված է մոտ 200 *քմ* թանգարանի տարածքով, որը տրամադրված է ամբողջ համալիրի կառուցման ու քրիստոնեության պատմության լուսաբանմանը: Այստեղ ցուցադրվում են նաև ֆոտոնյութեր, կան գրադարան նվիրված քրիստոնեությանը և նրա տարածմանը Հայաստանում, փոքրիկ դահլիճներ, ուր տարբեր խմբեր կարող են լսել քրիստոնեության պատմությանը վերաբերող դասախոսություններ, դիտել դիաֆիլմեր, ծառայողական սենյակներ, սանհանգույցներ:

Այս ամբողջ տարածքը, բացի դրսի անմիջական կապից, աստիճաններով կապված են նաև գավթի հետ, որը նշանակում է ներքին հարմար կապ մատուռների, գլխավոր եկեղեցու և նույն հարթության վրա գտնվող արևմտյան մուտքի հետ (նկ. 4):

Նկ. 4. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան և հարավային ճակատները

Կոնստրուկտիվ լուծումը: Համալիրն ամբողջությամբ կառուցված է միաձույլ երկաթբետոնից, երեսպատման համար ընտրվել է Հայաստանի պատմական մայրաքաղաք Անիի բաց նարնջագույն տուֆը: Մայր եկեղեցու աղոթասրահը ծածկելու համար օգտագործվել է փոխադարձ խաչաձևող կամարներով կոնստրուկտիվ համակարգը: Ամբողջ աղոթասրահի ազատ տարածքն իրականանում է ի շնորհիվ ընտրված կոնստրուկտիվ հետաքրքիր լուծման: Իրարից 16 *մ* հեռավորության վրա գտնվող և դրանց վրա հենված՝ 38 *մ* թռիչք ունեցող կամարների վրա է նստում եկեղեցու սյունազարդ գմբեթը: Հայտնի է, որ ծածկի այսպիսի

համակարգը կիրառություն է ունեցել միջնադարյան Հայաստանի վանական համալիրների միայն գավիթ-ժամատներում, գրատներում ու սեղանատներում:

Նոր ժամանակներում այսպիսի լուծումներ են ստացել Սփյուռքի մի քանի հայկական եկեղեցիները՝ կառուցված Անթիլիասում, Աթենքում, Պոլսում և Նյու Յորքում (վերջինը Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործական մտահղացմամբ) (նկ. 5):



Նկ. 5. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան ճակատը, երկայնական կտրվածքը

Սուրբ Տրդատ և Սուրբ Աշխեն մատուռներ: Երկու մատուռներն էլ ունեն նույն հատակագծային և ծավալատարածական լուծումները և Գլխավոր եկեղեցու հետ կազմում են մեկ ճարտարապետական ամբողջություն: Հատակագծերում խաչն ամփոփված է 18x18 *մ* չափերի քառակուսու մեջ: Բարձրությունը մինչև խաչի տակը 29 *մ* է: Սրանցից յուրաքանչյուրը ներսում ունի 120…150 նստատեղ և գլխավոր արևմտյան մուտքից բացի ներքին մուտքով կապված է գավթի հետ: Ծածկն իրականացված է ավանդական եղանակով՝ գմբեթը հենվում է չորս կամարների վրա: Սրանք իրականացնում են որոշակի գործառույթ՝ առօրյա ամեն տեսակ ծիսակատարություններ՝ հարսանյաց հանդես, կնունք, հոգեհանգիստ և այլն: Մատուռները նույնպես թե ներսից և թե դրսից երեսապատված են քարով:

Գավիթ: Եկեղեցու մուտքի առջև տեղադրված են 30-ից ավելի կամարներով կառուցված զանգակատունն ու գավիթը: Գավթում են պահվում Գրիգոր Ա Լուսավորչի մասունքները, որոնք 2000թ. Գարեգին Երկրորդը բերել էր Նեապոլի Սուրբ Գրիգոր Հայի եկեղեցուց: Գավիթն ամբողջ համալիրի տարբեր կառույցների ներքին կապող օղակն է: Իրենից ներկայացնում է մի ութանիստ կամարակապ սրահ՝ 15x15 *մ* չափերով՝ նույնքան բարձրությամբ, որի առաստաղի վրա տեղադրված է ապակեպատ երդիկ հիշեցնող, նույնպես ութանիստ հատած բուրգ:

Գավիթից են սկսվում ուղիները դեպի մեծ եկեղեցու աղոթասրահ, մատուռներ, ստորգետնյա տարածք և վերին հարթակ, որտեղ տեղավորված են մեծ երգեհոնն ու երգչախումբը: Այստեղ է կատարվում մոմերի և սրբապատկերների վաճառքը: Սա նաև յուրօրինակ մոմավառության սրահ է: Այստեղ է կատարվում մոմավառությունը, որով եկեղեցիների ներքին տարածքի հարթությունները մրից ու ծխից զերծ են մնում: Պատերի ներքին

հարթությունները երեսապատվել են նույն տուֆի 8 *սմ* հաստության սալերով: Գավթի ստորգետնյա տարածքը լիովին տրամադրվել է տեխնիկական սպասարկմանն ու պահեստային սենյակներին:

Զանգակատուն: Ամբողջ համալիրի սկիզբն ու գլխավոր մուտքը, ինչպես նաև միջնադարյան համալիրներում, զանգակատունն է: Այն 8x8 *մ* չափերի հատակագծով և 22 *մ* բարձրությամբ մի աշտարակ է, որի վերին մասը պսակված է 5 *մ* բարձրության թևավոր քարե խաչով: Այն ավարտում է զանգակատան ծավալն իր պլաստիկ լուծումով՝ ի տարբերություն եկեղեցու և մատուռների գմբեթների: Զանգակատան ծավալի հիմնական ճարտարապետական տարրը նախամուտքն է: Այն իրենից ներկայացնում է իրար վրա դեպի երկինք սլացող, իրարից աստիճանաբար մեծացող կամարների փունջ, որի ամբողջությունը շարունակում է բազմապրոֆիլ հայկական կերտվածքը, որի ավանդական ձևի մեջ ամփոփվում է 5 *մ* միջին բարձրության տուֆի վրա կատարված հարթաքանդակը: Թեման Գրիգոր Լուսավորիչն է, նրա ձեռքին խաչն է, որն իբրև քրիստոնեության խորհրդանիշ նա հանձնում է Տրդատին և Աշխենին, որոնց շուրջը հավատացյալ ժողովուրդն է: Զանգակատունը ևս դրսից և ներսից երեսապատված է ոսկեգույն տուֆով:

Եզրակացություն: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համալիրում ներկայացված է աղոթասրահի տարածության նորարարական մեկնաբանությունը: Աղոթասրահի համար ընտրվել է երկաթբետոնի համար ամենահարմար՝ խաչվող կամարների կոնստրուկցիան: Սա բնորոշ լինելով գավիթների ճարտարապետությանը՝ հարազատորեն ներմուծվել է նաև աղոթասրահների կերտման մեջ: Առաջադրված նորարարական լուծումները նպաստել են կառույցի մասշտաբայնությանն ու մեծաչափությանը:

А. Ж. Торосян

КОМПЛЕКС КАФЕДРАЛЬНОГО СОБОРА СВЯТОГО ГРИГОРА ЛУСАВОРИЧА

Представлен анализ плана и объемно-пространственной композиции Ереванского комплекса кафедрального собора Св. Григора Лусаворича и отдельных его составляющих. Выявлены функциональные и структурные особенности комплекса. Приведены имеющие схожие решения аналогичные церкви диаспоры. Зафиксирован тот новаторский подход, который был получен путем творческого использования традиционных решений. Это способствовало наиболее полному раскрытию представления о масштабности и монументальности сооружения.

Ключевые слова: *Св. Григор Лусаворич, церковь, монастырский комплекс, анализ плана и объемно-пространственной композиции, функциональные особенности*

A.Zh.Torosyan

COMPLEX OF SAINT GREGORY THE ILLUMINATOR CATHEDRAL

The layout and dimensional composition of the complex of St. Gregory the Illuminator Church of Yerevan and its separate components are examined. The functional and structural features of the structure

are disclosed. Analogue churches with similar solutions in the diaspora are included. The innovative approaches that have been made have been achieved through creative use of traditional solutions. They have contributed to a more comprehensive understanding of the scale and monumentality of the structure.
***Keywords**: Saint Gregory the Illuminator, monastery, analysis of the composition, functional peculiarities*

Գրականություն

***1. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան.** Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, Հուշամատյան նավակատիքի և օծման 23 սեպտեմբեր 2001, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001.*

***Թորոսյան Արման Ժիրայրի** (ՀՀ, ք.Երևան)- ՃՇՀԱՀ, ՃՏՊՃԺՎԳԱ և Պ ամբիոն, ասիստենտ, ասպիրանտ, (+374)41699939, homentmenmosh@mail.ru*
***Торосян Арман Жирайрович** (РА, г.Ереван)- НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, ассистент, аспирант, (+374)41699939, homentmenmosh@mail.ru*
***Torosyan Arman Zhirayr (RA, Yerevan)** - NUACA, chair of THARRHM & H, assistant, postgraduate student, (+374)41699939, homentmenmosh@mail.ru*

Ներկայացվել է՝ 05.12.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.12.2017թ.